Սիպիլ

Հե՛ք հիմար կին

Կը վազե ան, շուտ-շուտ կ՝երթար դեպի ծով,
Եվ անդունդին վրրա ծրռած ծարավի,
Կ՝ուզե պատռել խութն ու ծրփանքն իր կոծով,
Ծրծել, քամել, հատցցրնել ծովն յուրովի:
Կը վազե ան, շուտ-շուտ կ՝երթա դեպի ծով:
Թաց նայվածք մը աղոտ աչքին մեջ տարտամ
Կը թրոթրոա ցրնցումներով թախծագին,
Եվ ցավատանջ ըզգացումներ կը կարդամ
Անոնց հատակն ուր մոլորած է հոգին:
Տենդոտ սարսուռ մ՝ունի բերանն իր ցամաք
Խրնդուք մ՝որ սև օր մ՝իր բերնին է փակեր,
Եվ խոսվածքին մեջ շեշտ մը խոլ ու ճերմակ
Կը ծիծաղի, երբ կ՝արտասվեն իր աչքեր:
Ձայն մ՝որ երգի կը նրմանի սրրտաբեկ
Նիհար կուրծքեն դուրս կը թրոչի զերթ բողոք,
Խուլ անեխք մը, զոր չէ լրսած մարդ երբեք,
Հեծկրլքուտ մը և մաշող հազ մ՝անողոք:
Հետո, հանկարծ քրրքիջ մ՝ահեղ հեգնական
Քարին, ժայռին դեմ և լույսին, խավարին.
Ինչո՞ւ չեն լար անոնք կորուստն իր մանկան
Որ ծովն ինկավ, մեռավ անցյալ հունվարին:
Միակ սերն էր զոր իր գրրկեն ծովն առավ,
Իր կաթոգին պաշտած մանկիկն այն զրվարթ,

Վարդ մ՚էր ինքն ալ. կըսկիծն ըրավ զայն պառավ.
«Հե՞ք հիմար կին», կ՚ըսե իրեն ամեն մարդ,
Հե՞ք հիմար կին, որ կը պարե ալ հիմակ,
Մոռանալով ցավն, անեծքն, արցունքն ու Աստված.

Վար կը նետե իր վիշտերուն սև դիմակ,
Կարծես մանկիկն հոն է լանջին փաթթըված:
Բայց կը վազե նորեն կ՚երթա դեպի ծով,
Եվ անդունդին վրա ծըռած ծարավի,
Կ՚ուզե պատռել խութն ու ծըփանքն իր կոծով,
Ծըծել, քամել, հատցընել ջուրն յուրովի:
Ու կը վազե, շուտ-շուտ կ՚երթա դեպի ծով:

1892